Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1515-Լ որոշման

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NN ը/կ	**Միջոցառման անվանումը**	**Ակնկալվող արդյունքները**	**Ֆինանսավորման աղբյուրը**	**Պատասխանատու կատարող, համակատարող**
1.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում (միջոցառումը կասեցված է լավարկման նպատակով)	Ուսուցում անցած շուրջ 650 անձանցից առնվազն 75 %-ի (487 մարդ) աշխատանքի տեղավորում	ՀՀ պետական բյուջե՝ 132,437.50 հազ. դրամ (ընդ որում՝ ուսուցման կազմակերպման ծախս՝ 59,312.50 հազ. դրամ, կրթաթոշակ՝ 73,125.0 հազ. դրամ)	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն
2.	Աշխատաշուկայում անմրցունակ, ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում (միջոցառումը կասեցված է լավարկման նպատակով)	Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ, հաշմանդամություն ունեցող 80 անձանց աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցումը, որոնցից 11-ին՝ ուղեկցողի համար նաև դրամական օգնության տրամադրումը: Ապահովել միջոցառման մեջ ընդգրկված անձանց	ՀՀ պետական բյուջե՝ 76,950.0 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

		շուրջ 90 %-ի կայուն զբաղվածությունը		
3.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում (միջոցառման գործողությունը դադարեցված է 2022 թ. հունվարի 1-ից)	Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող 450 գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում գործատուի մոտ, որից 337 մարդ ծրագրի ավարտից հետո նույնպես կշարունակի լինել զբաղված	ՀՀ պետական բյուջե՝ 203,336.9 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
4.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում (միջոցառումը կասեցված է լավարկման նպատակով)	1) Գործատուի մոտ գործուղել աշխատաշուկայում անմրցունակ շուրջ 950 անձանց՝ հմտություններն ու ունակությունները զարգացնելու համար: Ապահովել միջոցառման մեջ ընդգրկված անձանց շուրջ 90 %-ի կայուն զբաղվածությունը 2) Հաշմանդամություն ունեցող 50 անձանց աշխատատեղը հարմարեցնելու միջոցով աշխատանքի տեղավորում: Ապահովել միջոցառման մեջ ընդգրկված	1) ՀՀ պետական բյուջե՝ 190,000.0 հազ. դրամ 2) ՀՀ պետական բյուջե՝ 25,000.0 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

		անձանց շուրջ 90 %-ի կայուն զբաղվածությունը		
5.	Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կազմակերպել 2300 ծրագիր	ՀՀ պետական բյուջե՝ 580,401.47 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
6.	Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում (միջոցառումը կասեցված է լավարկման նպատակով)	2023 թ. նոր պայմանագրեր չեն կնքվելու: Նախատեսվող ֆինանսա-կան միջոցներն ուղղվելու են 2020 թ. կնքված թվով 150 պայմանագրերի շրջանակ-ներում ծագած և 2023 թ. դեռևս շարունակվող ֆինանսական պարտա-վորությունների մարմանը	ՀՀ պետական բյուջե՝ 30,000.0 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
7.	Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում (միջոցառումը կասեցված է լավարկման նպատակով)	Գործազուրկների համար կազմակերպել 100 ծրագիր՝ ընդգրկելով 600 շահառու	ՀՀ պետական բյուջե՝ 151,500.0 հազ. դրամ, այդ թվում՝ իրականացման ապահովման ծախսեր՝ 1,500.0 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ մարզպետարաններ
8.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում (միջոցա-ռումը կասեցված է լավարկման նպատակով)	Կազմակերպել աշխատաշու-կայում անմրցունակ 135 անձանց ձեռնարկատի-րական գործունեության համար անհրաժեշտ ֆինան-սական աջակցություն: Միջոցառման	ՀՀ պետական բյուջե՝ 212,250.0 հազ. դրամ, այդ թվում՝ 150 անձի խորհրդատվական ծառայությունների գումար՝ 30,000.0 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

		շրջանակներում՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության պատվիրակում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությանը: Ապահովել միջոցառման մեջ ընդգրկված անձանց շուրջ 90 %-ի կայուն զբաղվածություն		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ